ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԵՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ (ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍՈՎ) ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ԵՐԵՎԱՆ 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ՄԳ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 3
ՄԳ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ 5
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՁԵՎԱՉԱՓԸ 6
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ 7
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՓԱՍՏԱՑԻ ԵՎ ԹԻՐԱԽԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՍԱՀԱՄՆՈՒՄԸ 7
ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՀԱՇՎԱՐԿԸ 9
ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ 10

.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Սույն մեթոդաբանությունը սահմանում է Հայաստանի Հանրապետության կրթության, առողջապահության, պետական եկամուտների հավաքագրման և ոստիկանության (քաղաքացիներին ծառայությունների մատուցման մասով) ոլորտներում մշակված կոռուպցիոն ռիսկերի վրա հիմնված հակակոռուպցիոն գործողությունների իրականացման ընթացքի մշտադիտարկման (մոնիթորինգի) և գնահատման (այսուհետ՝ ՄԳ) մեթոդները, արդյունքների ներկայացման ձևաչափերը և ՄԳ գործընթացին առնչվող այլ հարցեր: Սույն մեթոդաբանությամբ նախատեսվում է ՄԳ իրականացում՝ ըստ առանձին ոլորտների, հիմք ընդունելով սահմանված ցուցանիշների փաստացի և թիրախային արդյունքների համադրումը:
2. Սույն մեթոդաբանության մեջ օգտագործվող հասկացությունները կիրառվում են ներկայացված սահմանումների իմաստով:

ՄԳ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **կոռուպցիոն ռիսկ՝** դիտարկվող ոլորտներում առանձնացված և հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի շրջանակում նկարագրված ռիսկ, որի հաղթահարման համար սույն ծրագրով սահմանված են առկա ռիսկի չեզոքացմանը կամ նվազեցմանն ուղղված գործողություններ,
2) **ռիսկի չեզոքացմանը կամ նվազեցմանն ուղղված քանակական գործողություն՝** քայլեր, գործողություններ, միջոցառումներ որոնք ուղղված են ռիսկի չեզոքացմանը կամ նվազեցմանը և ունեն հստակ նախանշված, չափելի արդյունք,
3) **ռիսկի չեզոքացմանը կամ նվազեցմանն ուղղված որակական գործողություն՝** քայլեր, գործողություններ, միջոցառումներ որոնք ուղղված են ռիսկի

չեզոքացմանը կամ նվազեցմանը, սակայն չունեն հստակ նախանշված, չափելի արդյունք,

4) **մշտադիտարկման ցուցանիշ՝** ռիսկի չեզոքացմանը կամ նվազեցմանն ուղղված քանակական կամ որակական գործողությունը բնութագրող, այդ գործողության նպատակը, դրանում ներգրավված ռեսուրսները և կատարողականը նկարագրելու և գնահատելու համար սահմանված քանակական և/կամ որակական ցուցանիշներ,

5) **մշտադիտարկման ցուցանիշի փաստացի արժեք՝** ցուցանիշի համար՝ դիտարկվող ժամանակահատվածում, սահմանված պարբերականությամբ, մեթոդով և համապատասխան աղբյուրներից հավաքագրված (ստացված) արժեք,

6) **մշտադիտարկման ցուցանիշի թիրախային արժեք՝** իրավական ակտերով կամ փորձագիտական գնահատականի հիման վրա ցուցանիշի համար սահմանված արժեք, որը պետք է ապահովվի ռիսկի չեզոքացմանը կամ նվազեցմանն ուղղված քանակական կամ որակական գործողության իրականացման արդյունքում,

7) **ցուցանիշի կատարողականի գնահատական՝** ցուցանիշի փաստացի և թիրախային արժեքների հարաբերությունը, եթե տվյալ ցուցանիշի համար փաստացի արժեքի գերազանցումը թիրախային արժեքին բերում է ցուցանիշի կատարողականի բարելավման և թիրախային արժեքի հարաբերությունը փաստացի արժեքին և/կամ եթե փաստացի արժեքի գերազանցումը թիրախային արժեքին բերում է ցուցանիշի կատարողականի վատացման,

8) **գործողության տեսակարար կշիռ՝** սահմանված կոռուպցիոն ռիսկի վրա գործողության ունեցած ազդեցությունը բնութագրող գործակից (տվյալ ռիսկի շրջանակներում սահմանված գործողությունների տեսակարար կշիռների գումարը պետք է հավասար լինի մեկի),

9) **գործողության կատարողականի գնահատական՝** տվյալ գործողության մեջ ներառված ցուցանիշների կատարողականների միջին թվաբանականը,

10) **կոռուպցիոն ռիսկի հաղթահարման գնահատական՝** նկարագրված տվյալ ռիսկում ներառված յուրաքանչյուր գործողության կատարողականի գնահատականի և տեսակարար կշռի արտադրյալների գումարը:

ՄԳ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Ծրագրերի ՄԳ-ն իրականացվում է հետևյալ փուլերով.

1) **նախապատրաստական փուլ՝**
   ա. սահմանված գործողությունների դասակարգում՝ ըստ դրանց բնույթի (որակական և քանակական),
   բ. գործողությունների տեսակարար կշիռների սահմանում,
2) **ՄԳ ցուցանիշների մշակման փուլ՝**
   ա. ՄԳ ցուցանիշների մշակում,
   բ. մշակված ցուցանիշների համաձայնեցում և լրամշակում,
   գ. մշակված ցուցանիշների դասակարգում՝ ըստ բնույթի՝ (որակական և քանակական),
   դ. մշակված ցուցանիշների համար թիրախային արժեքների սահմանում,
3) **ՄԳ տեղեկատվական համակարգի ձևավորման փուլ՝**
   ա. տեղեկատվական համակարգի տեխնիկական նկարագրի մշակում՝ ՄԳ ցուցանիշներին համապատասխան,
   բ. ՄԳ ցուցանիշների ստացման ծրագրային ապահովում,
4) **ՄԳ ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման փուլ՝**
   ա. տեղեկատվության ստացում համապատասխան տեղեկատվական շտեմարաններից,
   բ. տեղեկատվության ստացում հետազոտությունների, ուսումնասիրությունների և ստուգումների միջոցով,
   գ. տեղեկատվության ստացում վիճակագրական և այլ հրապարակումներից ու հաշվետվություններից,

դ. տեղեկատվության ստացում այլ աղբյուրներից՝ առցանց կամ փաստաթղթային եղանակով:

5) **ՄԳ ցուցանիշների վերաբերյալ ստացված տեղեկատվության վերլուծության փուլ՝**

ա. սահմանված թիրախային և փաստացի ցուցանիշների շեղումների վերլուծություն և մեկնաբանում,

բ. ըստ անհրաժեշտության խորքային վերլուծության իրականացում,

6) **Ծրագրի գնահատման փուլ՝**

ա. ՄԳ ցուցանիշների կատարողականի գնահատականի հաշվարկ,

բ. գործողությունների կատարողականի գնահատականի հաշվարկ,

գ. կոռուպցիոն ռիսկի հաղթահարման գնահատականի հաշվարկ,

7) **ՄԳ հաշվետվության մշակման և ներկայացման փուլ՝**

ա. ՄԳ արդյունքների ամփոփ հաշվետվության պատրաստում,

բ. ամփոփ հաշվետվության քննարկում շահագրգիռ կողմերի հետ,

գ. ՄԳ հաշվետվության լրամշակում և ներկայացում հաստատման,

դ. ՄԳ հաշվետվության արդյունքների հրապարակում (ըստ անհրաժեշտության)

8) **ՄԳ արդյունքների կիրառման փուլ՝**

ա. ՄԳ արդյունքերի հիման վրա հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրի՝ ըստ ոլորտների, հետագա փոփոխությունների մասին պլան-ժամանակացույցի կազմում,

բ. պլան-ժամանակացույցի հաստատում և դրա իրականացման նկատմամբ մոնիթորինգի իրականացում:

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՁԵՎԱՉԱՓԸ

Ըստ ոլորտների սահմանված յուրաքանչյուր կոռուպցիոն ռիսկի և նրանում ընդգրկված կոռուպցիոն ռիսկը չեզոքացնելուն կամ նվազեցմանն ուղղված գործողության համար մշակվում են մոնիթորինգային ցուցանիշներ՝ համաձայն Հավելված 1-ում բերված ձևաչափի:

Մոնիթորինգային ցուցանիշները մշակվում են Microsoft Excel ձևաչափով:

Հավելված 1-ում բերված ձևաչափի 6-րդ և 12-րդ սյունակները լրացվում են ոլորտի փորձագետների կողմից և մոնիթորինգային ցուցանիշները մշակող աշխատանքային խմբի մասնագետների աջակցությամբ:

Հավելված 1-ում բերված ձևաչափի 5-րդ, 10-րդ և 8-րդ սյունակը մշակվում է մոնիթորինգային ցուցանիշները մշակող աշխատանքային խմբի մասնագետների կողմից և կիրառման մեջ դրվում ոլորտային փորձագետների կողմից համաձայնություն ստանալուց հետո: Ըստ անհրաժեշտության, այս սյունակում բերված մոնիթորինգային ցուցանիշները կարող են ենթարկվել լրամշակման ոլորտային փորձագետների կողմից:

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ

Մոնիթորինգային ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման նպատակով, յուրաքանչյուր ցուցանիշի համար սահմանվում է տեղեկատվության աղբյուրը և հավաքագրման ժամկետը՝ համաձայն Հավելված 2-ի:

Հավելված 2-ը ձևավորվում է մոնիթորինգային ցուցանիշների մշակումից հետո և լրացվում ոլորտային փորձագետների (համապատասխան գերատեսչությունների) և ՀՀ կառավարության մոնիթորինգի բաժնի կողմից:

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՓԱՍՏԱՑԻ ԵՎ ԹԻՐԱԽԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՍԱՀԱՄՆՈՒՄԸ

Ժամկետը բնութագրող քանակական մոնիթորինգային ցուցանիշների համար ցուցանիշի փաստացի և թիրախային արժեքները սահմանվում են համաձայն Աղյուսակ 1-ի:

Որակը բնութագրող մոնիթորինգային ցուցանիշների համար ցուցանիշի փաստացի և թիրախային արժեքները սահմանվում են համաձայն Աղյուսակ 2-ի՝ հիմք ընդունելով փորձագիտական գնահատականները:

Աղյուսակ 1. Ժամկետը բնութագրող ցուցանիշների փաստացի և թիրախային արժեքների սահմանում.

Ցուցանիշի կատարման պայմանը	Գերազանցում է թիրախային ժամկետը				
	Մինչև 5 օր	5-ից 10 օր	10-ից 20 օր	20-ից 30 օր	30օրից ավելի
Ցուցանիշի միավորը	3	2,5	2,0	1,5	1,0
Ցուցանիշի կատարման պայմանը	Պակաս է թիրախային ժամկետից				
	Մինչև 5 օր	5-ից 10 օր	10-ից 20 օր	20-ից 30 օր	30 օրից ավելի
Ցուցանիշի միավորը	3	3,5	4,0	4,5	5,0

Աղյուսակ 2. Որակը բնութագրող ցուցանիշների փաստացի և թիրախային արժեքների սահմանում.

Ցուցանիշի կատարման պայմանը	Գերազանցում է ակնկալվող թիրախային արդյունքը				
	Մինչև 5%	5-ից 10%	10-ից 20%	20-ից 30%	30%-ից ավելի
Ցուցանիշի միավորը	3	3,5	4,0	4,5	5,0
Ցուցանիշի կատարման պայմանը	Զիջում է ակնկալվող թիրախային արդյունքը				
	Մինչև 5%	5-ից 10%	10-ից 20%	20-ից 30%	30%-ից ավելի
Ցուցանիշի միավորը	3	2,5	2,0	1,5	1,0

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՀԱՇՎԱՐԿԸ

Կոռուպցիոն ռիսկի հաղթահարման գնահատականը (մշտադիտարկման արդյունքի գնահատականը) հաշվարկվում է հետևյալ հաջորդականությամբ.

1) Յուրաքանչյուր մշտադիտարկման ցուցանիշի կատարողականի՝ Կ(Ց)-ի հաշվարկ.

$$Կ(Ց) = Ց(փ)/Ց(թ)$$

Որտեղ՝ Ց(փ)-ն և Ց(թ)-ն ցուցանիշի փաստացի և թիրախային արժեքներն են՝ այդ թվում նաև ժամկետային և որակական ցուցանիշները, որոնց միավորները սահմանվում են համաձայն Աղյուսակ 1-ի և 2-ի:

2) Յուրաքանչյուր գործողության կատարողականի գնահատականի Կ(Գ) հաշվարկ.

$$Կ(Գ) = (SUM(Կ(Ց))/m$$

Որտեղ՝ m-ը գործողությունում ընդգրկված մոնիթորինգային ցուցանիշների թիվն է, որոնց վերաբերյալ հավաքագրվել է փաստացի արժեքի տեղեկատվությունը, SUM(Կ(Ց))-ն գործողությունում ընդգրկված բոլոր մոնիթորինգային ցուցանիշների կատարողականների գումարն է:

3) Կոռուպցիոն ռիսկի հաղթահարման գնահատականի՝ ԿՌ(Գ)-ի հաշվարկ.

$$ԿՌ(Գ)= MxSUM(Կ(Գ)xՏԿ)$$

Որտեղ՝ ՏԿ – կոռուպցիոն ռիսկում ներառված գործողության տեսակարար կշիռն է, Կ(Գ)xՏԿ-ը՝ կոռուպցիոն ռիսկում ընդգրկված գործողության կատարողականի և այդ գործողության տեսակարար կշռի արտադրյալը, SUM(Կ(Գ)xՏԿ)-ը՝ նշված մեծությունների արտադրյալների գումարը, M-ը՝ ԿՌ(Գ)-ի չափման սանդղակի միավորը: Առաջարկվում է ԿՌ(Գ)-ն հաշվարկել 0-ից 10 միավորանոց սանդղակով, ուստի գնահատման ժամանակ ընդունվում է M=10:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Եթե կոռուպցիոն ռիսկի գնահատման ժամանակ նրանում ներառված որևէ գործողության մոնիթորինգային ցուցանիշներից և ոչ մեկի վերաբերյալ չի հաջողվել հավաքագրել տեղեկատվություն, ապա այդ գործողությունը չի մասնակցում գնահատմանը և այդ գործողության համար սահմանված տեսակարար կշիռը հավասարաչափ բաշխվում է կոռուպցիոն ռիսկում ներառված մյուս գործողությունների մեջ:

Եթե կոռուպցիոն ռիսկի գնահատման ժամանակ նրանում ներառված որևէ գործողության մոնիթորինգային ցուցանիշի վերաբերյալ չի հաջողվել հավաքագրել տեղեկատվություն, ապա այդ ցուցանիշը չի մասնակցում գործողության կատարողականի գնահատականի հաշվարկմանը:

Գործողությունների տեսակարար կշիռների հաշվարկը կատարվում է Աղյուսակ 3-ում բերված մեթոդաբանությամբ:

Աղյուսակ 3.

Հ/Հ	Կոռուպցիոն ռիսկի անվանումը	Գործողության հերթական համարը	Գործողության անվանումը	Գործողության ազդեցության նիշը	Գումարային նիշի հակադարձը	Տեսակարար կշիռը
1	2	3	4	5	6	7
1	Կոռուպցիոն ռիսկ 1.	1.1.	Գործողություն 1	1	0,030	0,030
		1.2.	Գործողություն 2	1	0,030	0,030
		1.3.	Գործողություն 3	3	0,030	0,091
		1.4.	Գործողություն 4	2	0,030	0,061
		1.5.	Գործողություն 5	3	0,030	0,091

		1.6.	Գործողություն 6	3	0,030	0,091
		1.7.	Գործողություն 7	2	0,030	0,061
		1.8.	Գործողություն 8	4	0,030	0,121
		1.9.	Գործողություն 9	4	0,030	0,121
		1.10.	Գործողություն 10	5	0,030	0,152
		1.11.	Գործողություն 11	5	0,030	0,152
			Գումարը	33		1

Աղյուսակ 3-ում պայմանական կոռուպցիոն ռիսկում ընդգրկված են պայմանական թվով 11 գործողություններ: Փորձագետները 1-ից 5 միավորների միջակայքում սահմանում են յուրաքանչյուր գործողության համար ազդեցության նիշը, որտեղ 1-ը ամենաթույլ ազդեցությունն է, իսկ 5-ը՝ ամենաբարձրը:

Հաշվարկվում է գործողության ազդեցության նիշերի գումարը (գումարը կազմել է 33): Հաշվարկվում է գումարի հակադարձ մեծությունը (1:33 = 0,030), որի արդյունքը ներառված է 6-րդ սյունակում:

Միևնույն գործողության 5-րդ և 6-րդ սյունակների թվերի արտադրյալը տվյալ գործողության տեսակարար կշիռն է, որը բերված է 7-րդ սյունակում (այդ սյունակի արժեքների գումարը հավասար է 1-ի):

Հավելված 1.

Մոնիթորինգային ցուցանիշների մշակման ձևաչափ

Հ/Հ	Կոռուպցիոն ռիսկի անվանումը	Գործողության հերթական համարը	Գործողության անվանումը	Գործողության բնույթը	Գործողության տեսակապարկշիռը	Ցուցանիշի հերթական համարը	Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշի չափման միավորը	Ցուցանիշի բնույթը (1-քանակական, 2-որակական)	Ցուցանիշի փաստացի արժեքը	Ցուցանիշի թիրախային արժեքը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	……	1.1.	……			1.1.1.	……				
						1.1.2.	……				
		1.2.	……			1.2.1.	……				
						1.2.2.	……				
2	……	2.1.	……			2.1.1.	……				

						2.1.2.	……				
		2.2.	…… ……			2.2.1.	……				
						2.2.2.	……				

Հավելված 2.

Մշտադիտարկման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման ձևաչափ

Ցուցանիշի հերթական համարը	Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրող կառույցի անվանումը	Տեղեկատվության տրամադրման ձևը			Տեղեկատվության տրամադրման ժամկետը
			Թղթային	Էլեկտրոնային	Առցանց	
1	2	3	4	5	6	7
1.1.1.	……					
1.1.2.	……					

1.2.1.	……					
1.2.2.	……					
2.1.1.	……					
2.1.2.	……					
2.2.1.	……					
2.2.2.	……					